ARMENIAN VIRTUAL COLLEGE AGBU AVC ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION

Армянский Колледж

Учитесь говорить на АРМЯНСКОМ языке

+7 904 506 91 28

Ծիծաղը կփրկի աշխարհը

Երիտասարդ մի ուսուցչի հարցնում են՝ 1941 թիվն ինչով էր հայտնի: Ուսուցիչը դժվարանում է պատասխանել: Օգնության է հասնում մի ծերունի:

- Էն ժամանակ նա մի մատ երեխա էր, ի՞նչ իմանա:

❋❋❋

Սիմոնը խոպանից ուշ վերադարձավ: Արու զավակ էր ծնվել, աչքալուսանք էին անում:

- Երեխի ոչնչեն խաբար չի, գոնե աչքալուսանքին ներկա ըլի հերը, - ասում է կինը:

❋❋❋

Աղջկան բռնում են, որ փախցնեն:

- Թողեք, ես կամավոր կնստեմ մեքենան, - և նստում է: - Հո առաջին անգամ չէ:

❋❋❋

Ծննդատան մոտ Պողոսը ձայնում է կնոջը:

- Աղջի, ի՞նչ է նորածինը, տե՞ղդ ոնց է, տեղդ:

- Նորածինն էլ լավ է, տեղս լավ է:

- Մի մտածե, գալ տարի էլի կդրկեմ:

❋❋❋

- Անիչկայից ի՞նչ տեղեկություն ունես, չորս ամիս է ամուսնացել է, չենք տեսել:

- Արդեն երեխա ունի:

❋❋❋

Պողոսը ցեխոտ ոտներով մտավ արդեն շրջկոմի քարտուղար դարձած իր Ստյոպա ընկերոջ աշխատասենյակը:

- Ոտքերդ մաքրեիր, Պողո՛ս, խո ախոռ չէ՞:

- Թե ախոռ չէ՝ դու էստեղ ի՞նչ գործ ունիս:

АРМЯНСКИЙ ЯЗЫК ДЛЯ САМЫХ МАЛЕНЬКИХ

Դ դ

ԴԻՄԱԿԸ

Ես վախենում,
Սարսափում,
Խուսափում եմ դիմակից,
Որովհետև չեմ տեսնում
Շարժվող ոչ մի դիմագիծ:

Ե ե

ԵՐԱՆԻ

Ախ, երանի, երանի,
Այն երջանիկ բերանին,
Որ նոր պիտի իմանա
Համը հայոց ծիրանի:

Զ զ

ԶՐԱՀԱԿԻՐ ՄԻ ԲԶԵԶ

Զամբյուղի մեջ տզտզում էր
Զրահակիր մի բզեզ:
Երևի նա խաղողի հետ
Երեկ էր հյուր եկել մեզ:

Վայ թե մեզնից նեղացել էր.
- Ինչ մարդիկ են...
Ինչ տուն է...
Ոնց կարող են զրահակիր
Բզեզին ներս չընդունել:

Рубрику ведет преподаватель армянского языка Армине Варданян

Նյութը վերցված է Յուրի Սահակյանի «Այբբենարանի ուղեկից» գրքից

Տպագրության պատրաստեց Արմինե Վարդանյանը

КРОССВОРДЫ ОТ ШОГИК СИМАВОНЯН



Кроссворд № 4

По вертикали: 1. Монета. **2.** Общительный.

По горизонтали: 1. Тыква. **3.** Дверь.



Кроссворд № 5

По вертикали: 1. Тридцать. **3.** Я.

По горизонтали: 2. Лицо. **4.** Внутрь.



Кроссворд № 6

По вертикали: 1. Звонок, колокол. **2.** Удивление.

По горизонтали: 3. Грамм. **4.** Камень.

Рубрику ведет преподаватель армянского языка Шогик Симавонян

Գյումրիի հիշողության դափնեկիրները

Հենրիկ Գևորգյան



Լենինականի «Բանվոր» թերթը լավագույններից է Հայաստանում: Ճշմարտության թերթ է, լույս է տեսել խորհրդայնացումից անմիջապես հետո: Երկրաշարժից մի քանի տարի առաջ նոր խմբագիր եկավ, ու թերթն սկսեց բովանդակալից դառնալ: Դա երիտասարդ բանաստեղծ Հենրիկ Գևորգյանն էր: Նա արտահայտիչային թղթակիցներին մեծ տեղ էր տալիս, ասում էր.

- Դրանց գործը ճշմարտություն է, ժողովրդի հետ գործ ունեն:

Նա Հայկասար գյուղից էր, հարազատներն այնտեղ էին, ինքը, կինը, որդին քաղաքում էին: Որդին՝ Արտակը, վեցերորդ դասարանում էր սովորում, լավ էր նկարում և շատ էր սիրում պատմություն, կենդանական աշխարհ:

Անընդհատ հորը հարցնում էր.

- Հայրի՛կ, կարդացել եմ,որ 1926 թ-ին այստեղ ահեղ երկրաշարժ է եղել, բազմահազար զոհեր, կարո՞ղ է դարձյալ լինի՞:

- Ո՛չ, ո՛չ, էլ չի լինի, մի մտահոգվիր, տղա՛ս, հազար տարի առաջ Անին կործանվեց ու մեկ էլ 1926 թ-ին է եղել, այլևս չի լինի, մտքիցդ հանիր:

Արտակն իմացել էր, որ ձկները շուտ են զգում երկրի ցնցումը, հորը խնդրեց.

- Պա, ես կենդանական աշխարհ շատ եմ սիրում, ուզում եմ ակվարիում ունենալ, ձկների տեսակներ պահել, խնամել, կերակրել, ընկերներս ունեն, ինչո՞ւ ես չունենամ:

Հենրիկը, առանց խոսք տալու, երկու օր անց, մի մեծ ակվարիում բերեց: Որդին շատ ուրախացավ: Ընկերները եկան, ջուր, ավազ, խոտ, կեր բերեցին, դեռ մեկն էլ մի քանի ձկներ, դրանցից մեկը՝ կարմիր: Հաջորդ օրն Արտակը մի քանի հատ էլ բերեց՝ տարբեր գույների: Ուրախացավ, ազատ ժամանակ հաճախ էր նրանցով հրճվում: Բայց հաճախ էլ նրանց շարժումներին էր նայում տագնապած: Թեպետ հավատում էր հոր ասածներին, բայց և այնպես, մատաղ հոգու մեջ ինչ-որ կասկած կար: Անընդհատ հեռուստատեսությամբ ցուցադրում էին երկրաշարժեր ու կործանումներ, որոնք անկանխատեսելի են եղել: Այդ մեծ վնասներից ու զոհերից հետո էլ մարդկությունը դեռ չէր հայտնաբերել ալիքի գալը: Հետո Արտակը սկսեց բուռն թափով նկարներ ստեղծել, որ դպրոցում ցուցահանդես բացի:

Այդ ժամանակ Սումգայիթի հայոց ջարդի կապակցությամբ միտինգներ էին տեղի ունենում, գնում էր ու շուտ վերադառնում: Հետո կրկին հորը հարցեր էր տալիս.

- Պապա, կարծես գարուն լինի, ծառերը ծաղկել են, դեկտեմբեր է, բայց ամպերը դեռ գոռգոռում են, կայծակը ժայթում է, անձրև է գալիս ու անչափ տաք է, չլինի՞ նենգություն ունի անելու բնությունը, հը՞ պապա:

Հենրիկը խեթ-խեթ էր նայում որդուն ու կշտամբում:

- Չէ, որ ես քեզ ասացի, էդ վատ բաները մտքիցդ հանի, ձկներիդ կերակրիր, նկարներդ պատրաստիր համաքաղաքային ցուցահանդեսի համար:

Արտակը գլուխը կախեց ու սրտնեղած գնաց ակվարիումի մոտ: Դա դեկտեմբերի վեցն էր, երեկոյան: Նայեց, ակվարիումի ձկները տագնապած լողում են դես ու դեն, իսկ կարմիր ձուկն անշարժացած ընկել է հատակին: Վերցրեց, արագորեն, տարավ հոր մոտ ու ասաց.

- Տես, պա:

- Ոչինչ, որ էլ չկա, մի մտահոգվիր, ձուկը թռել է դես ու դեն, ակվարիումից դեն նետվել, սատկել, ուրիշ կարմիր ձուկ կառնես, - ասաց Հենրիկը: Նա որդու հետ տարակուսած գնաց ու տեսավ, որ իրոք, ձկների շարժումներում տառապալի իրարանցում կար, բայց չվախեցնելու համար ասաց.

- Ոչինչ էլ չկա, Արտակ ջան, դասերդ նայիր, որ առավոտյան դպրոց գնաս: Հաշված օրեր են մնում ցուցահանդեսին:

Առավոտյան վաղ, Արտակը գնաց ակվարիումի մոտ: Բոլոր ձկները թափված էին գետնին, անշարժացած: Սարսափած վազեց հոր մոտ, ձեռքից բռնեց, ցույց տվեց եղելությունը:

- Հայրիկ, համենայն դեպս, երկրաշարժ պիտի լինի:

Հենրիկը զայրացած ասաց.

- Գնա՛, գնա դպրոց, դասերից հետո նոր ձկներ կառնենք:

Արտակը լացակումած պայուսակը վերցրեց, ձկներին թողեց թափված, դպրոց գնաց: Վերջին անգամ համբուրեց հորն ու մորը, իմաստուն հոգու թելադրանքն էր: Մի տեսակ թախծալից էլ Հենրիկն ու Սուսանը գործի գնացին: Խմբագրությունում պատմեցին Արտակի տագնապած վարմունքի մասին, լսողը խորհուրդ էր տալիս գնալ երեխայի հետևից՝ կշտամբելով.

- Լավ չես արել, սիրտը կոտրելով ես, դասի ուղարկել, հոգեկանի վրա կագդի:

Այդ պահին Հենրիկն ու Սուսանն արագորեն հագնվեցին և այն է, պիտի դուրս գային, երբ դղրդոց լսվեց, ու սենյակն իջավ...

Տեսան ավտոտնակում են, դուռը բաց, անմիջապես իրար ձեռք բռնած դուրս վազեցին ու շենքն իջավ: Վազեցին դպրոցի կողմը, այն էլ չկար, փլատակի բլուր էր. փրկված երեխաները փախչում էին դես ու դեն: Ողջերի մեջ Արտակը չկար...

Ութ ժամ անց հանեցին նրա ճզմված մարմինը: Մարդ ու կին մազեր էին փիտում, բայց ուշ էր: Տանը իմացան հարազատներից ութ զոհվածների մասին ևս: Բոլորին Հայկասարում կողք կողքի շիրիմեցին:

Հենրիկն առժամանակ ղեկավարեց թերթի լույս ընծայումը: «Հիշողություն» հավելվածը, երեք երգիծական գրքեր հրատարակեց, սակայն վշտի ծանրությանը չդիմացավ, վախճանվեց ու շիրիմվեց իր Արտակի կողքին...

Հրանտ Սարգսյան